արտայայտիչը նրա բովանդակ զգացումների։ Աշուղ է նաեւ բանաստեղծը ինքը։ Նրա կոչումն է՝ ոչ միայն տխուր իրականութիւնը ողբալ, այլ եւ սփոփիչ խօսքեր ասել իր ժողովուրդին, յոյսի չողեր վառել նրա հոգում։

Ասի՝ աշուղ, ա՛ռ չունգուրբդ, մեզ բան ասա՛
սրտալի։
Կարօտ ենք քու անուշ ձէնին, մի բան ասա՛
սրտալի։
Սրտի խօսք ենք ուզում քեզնից, որ վեր հանի
մեր հոգին —
Ա՛ռ չունգուրբդ, դարդոտ աշուղ, մեզ բան ա-
սա՛ սրտալի։

Հարկաւ, բանաստեղծը լաւ գիտէ, որ աշուղը, այդ մարմնացումը իր ժողովուրդի եւ հայրենիքի, տանջւում է հազար ու մի ցաւերով։ գիտէ, որ նա զարերով համբում է հայրենիքի խոր խոցերը, գիտէ նաեւ այն, որ այդ խոցերը արտասուքի ծովերով անգամ լուանալ կարելի չէ։ Բայց եւ այնպէս, թո՛ղ երգիչը առնի իր քնարը ու «սրտի խօսք» ասէ լոյսի եւ յոյսի ծարաւի ունկնդիրներին։ Զէ՞ որ լուռ մնալով անկարելի է դեղ-դարման անել այդ ցաւերին։ «Մնջութիւնն էլ նրչան հօ չէ՞ մի դովելի յատկութեան»։ Աւելի լաւ է՝ աշուղի խօսքը տխուր, ցաւալի լինի, քան թէ լռութեան մատնուի նա։

«Մեր չը խօսկան լինելուցն է, մընացել ենք
անտէրունչ։
Լա՛ւ է՝ ազատ լաց լինելը, քանց դարդ տանիլն
անմռունչ»։

Գուսանը ժողովուրդի առաջնորդն է, նրա մխիթարիչը միանդամայն։ Նա պէտք է վառ պահէ հաւատը իր անձի մէջ, իրմով էլ վարակէ ժողովրդեան խաւերը։ Նա երբեք չպիտի յաղթուի հանրութիւնը մաշող քնիցը։ Ժողովուրդը թմրած է։ Նրան քունը անուշ է թըւում։ Եւ սակայն, երգիչը ո՛չ միայն չպիտի ազդուի այդ համատարած թմբիրից, այլ եւ պիտի ցրէ այն, սթափեցնէ մարդկանց հոգին, նրանց սրտերում կրակ պիտի վառէ ամենին նոր չունչ «տուող» իր «սրտալի բանով»։

6.— ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՈՏԻՒՆԵՐԸ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ինչպէս ասացինք արդէն, Ցովհաննէս Ցովհաննիսեան առաջինն է մեր նոր բանաստեղծների շարքում, որ առանձին ուշադրութեան առարկայ է դարձնում ժողովրդական ստեղծագործութիւնը, ինքն էլ գրում նոյն մոտիւներով ոտանաւորներ։ Դրանք սոսկ գրական մշակումներ չեն դեղջուկ երգերի, ոչ էլ սաբրկական հետեւողութիւն, այլ՝ նրանց ոգո՛վ գրուած, նրանց երանգո՛վ գունաւորուած — կենդանի ու աշխոյժ, թեթեւ ու սահուն, սիրով ու վշտով լի։

Շատ չեն Ցովհաննիսեանի այդ կարգի ստեղծագործութիւնները, բայց գեղեցիկ են ու տպաւորիչ։ Դրանք անշուշտ այս կամ այն չափով խթան են հանդիսացել հետագայ մի երկու բանաստեղծների համար, Թումանեանի եւ Իսահակեանի, որոնք եւ աւելի ընդարձակ չափերով են մշակել ժողովրդական մոտիւները։

Ինչպէս որ Ցովհաննիսեանի «Ա՛խ տուէք ինձ մի քաղցր քուն»ը բանաստեղծի սիրոյ ոտանաւորների շարքում ամենից աւելի ժողովրդականացածն է, տարածուածը երգի ձեւով, նոյնը կարելի է ասել նաեւ հեղինակի «Արազն եկաւ լսիին տալով», ժողովրդական մոտիւով գրուած ոտանաւորի համար, որ դարձեալ երգ է դարձած։ Հայ աշխարհն է շնչում նա, պարզ, կարծէք մի սովորական ժողովրդական երգ լինի։ Ու գրեթէ այդպէս էլ դարձած է, մտնելով ժողովուրդի մէջ եւ դառնալով նրա սեփականութիւնը։ Հայրենի գեաը — մեր պատմական մայր Արաքսը եւ ժողովուրդի Արազը որպէս կենդանաբար էակ խօսում է բանաստեղծի հետ։ Երիտասարդ, սիրավառ բանաստեղծը նրանից է «ջուղաբ», տեղեկութիւն ստանում իր սիրած եարի մասին։ Մի տեսակ կռունկ է Արազը, որի միջոցով բանաստեղծը կ՚ուզէր իր կարօտը առնել հեռաւոր սիրելիից, կ՚ուզէր մասնակից անել նրան իր դարդին, դեռ՝ «ծէգը չառած ջրին»։ Բայց, մխիթարանք չունի սիրատուչոր, պատանի-բանաստեղծը։ Արազը լուռ է, նրա եղերքին բարձրացող Մասիսի ճակատն էլ ամպերով է պօղուած։ Ու պաղատանքով դիմում է անմխիթար պատանին իր Արազին.

Աստած սիրես, էրուած սրտիս
Զուղաբ բերես էկող տարին։

Եւ այսպէս, թափառում է նա իր անյոյս